## ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

# ԹՈՄԱՍ ԷԴԻՍՈՆ



Թ. Էդիսոն

*Մի առիթով 20-րդ դարի հռչակավոր գյուտարար Թ. Էդիսոնին հարցնում են. «ինչո՞վ եք զբաղվում», նա պատասխանում է՝ ամեն ինչով։ Նա իսկապես հետաքրքրվում էր ամեն ինչով և բազմաթիվ գյուտերի ու հայտնագործությունների հեղինակ է։*

*Միայն ԱՄՆ-ում նրա անունով կա 1098 պատենտ և շուրջ 3000 պատենտ՝ աշխարհի 34 երկրներում։ Նա կատարելագործել է հեռագիրն ու հեռախոսը, ստեղծել է էլեկտրալամպը, կուտակիչ մարտկոցը, կառուցել առաջին էլեկտրաքարշը։ Նա է դրել «Էլեկտրոնիկա» գիտության զարգացման հիմքերը։*

*Զարմանալի աշխատունակություն ուներ. աշխատում էր օրական 20 ժամ, հաճախ քնում էր իր լաբորատորիայում՝ գիրքը գլխի տակ։ Նա ստեղծեց աշխատանքի իր՝ էդիսոնյան եղանակը, որի հիմքում փորձն էր։ Նրա նշանաբանն էր «փորձերի միջոցով գնալ դեպի նպատակ և սովորել սխալների վրա»։*

*Ա. Այնշտայնը նրան անվանել է «տեխնիկայի մեծ արարիչ», թեև Էդիսոնը վատ գիտեր բարձրագույն մաթեմատիկա և չկարողացավ ըստ արժանավույն գնահատել Այնշտայնի հարաբերականության տեսությունը։*